ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ 10/1

ՀՀ, ք. Երևան 7 ապրիլի 2023 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 49-րդ կետի 19-րդ և ԵՊՀ գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 19-րդ ենթակետերով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. հաստատել «Երևանի պետական համալսարանի լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման կանոնակարգը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի
2023 թ. ապրիլի 7-ի հարցման կարգով
թիվ 10/1 որոշման

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝
Հ. Վ. Հովհաննիսյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգով սահմանվում է «Երևանի պետական համալսարանի լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության (այսուհետ՝ մրցանակաբաշխություն) կազմակերպման և անցկացման կարգը:

1.2. Մրցանակաբաշխությունը կազմակերպվում և անցկացվում է տարին մեկ անգամ: Նպատակն է խրախուսել Երևանի պետական համալսարանի բակալավրիատում ու մագիստրատուրայում սովորող ուսանողների առաջադիմությունը և խթանել նրանց գիտական ու հասարակական ակտիվությունը: Մրցույթին կարող են մասնակցել ԵՊՀ բոլոր ֆակուլտետների, ինստիտուտների և կրթական ծրագրեր իրականացնող կենտրոնների կամ այլ ստորաբաժանումների (այսուհետ՝ ստորաբաժանում) ուսանողները:

1.3. Մրցանակաբաշխությունն անցկացվում է ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում:

1.4. Սույն կանոնակարգը հաստատվում, դրանում փոփոխություններ և լրացումներ են կատարվում Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

2. ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Մրցանակաբաշխությունը կազմակերպում և անցկացնում է «Երևանի պետական համալսարանի լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխության հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով), որը բաղկացած է 6 հիմնական անդամից՝ Երևանի պետական համալսարանի զարգացման և նորարարությունների գծով պրոռեկտորը, Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի տնօրենը, Իրավաբանական ծառայության պետը, Ռազմավարական պլանավորման կենտրոնի տնօրենը, Ուսանողական խորհրդի նախագահը, Ուսանողական գիտական ընկերության նախագահը: Հանձնաժողովի կազմում յու-

ռաքանչյուր ստորաբաժանման դեպքում ընդգրկվում է տվյալ ստորաբաժանման ղեկավարը:

2.2. Հանձնաժողովը նախագահում է ԵՊՀ զարգացման և նորարարությունների գծով պրոռեկտորը: Հանձնաժողովն իր կազմից ընտրում է քարտուղար:

2.3. Հանձնաժողովը սահմանում է իր գործունեության աշխատակարգը:

2.4. Հանձնաժողովը կարող է սահմանել նաև հատուկ մրցանակներ:

2.5. Թեկնածուների առաջադրման, հաղթողների ընտրության, մրցանակաբաշխության անցկացման (մրցանակների հանձնման հանդիսավոր արարողության) և այլ աշխատանքների կազմակերպման համար հանձնաժողովը հրավիրում է նիստեր ու աշխատանքային խորհրդակցություններ:

2.6. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ: Մրցանակաբաշխության հաղթողների վերաբերյալ հանձնաժողովի որոշումները մինչև մրցանակաբաշխության անցկացման օրը հրապարակման ենթակա չեն:

3. ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մրցանակաբաշխությանը կարող են մասնակցել բոլոր այն ուսանողները, որոնք առնվազն 4 կիսամյակ հանդիսացել են Երևանի պետական համալսարանի ուսանող, վերջին երկու կիսամյակների ընթացքում ունեցել են բարձր կամ գերազանց առաջադիմություն (ՄՈԳ-ը՝ 16 և բարձր), ինչպես նաև ունեն սույն կանոնակարգի 3.4 կետում նշված ձեռքբերումները: Մրցանակաբաշխությանը մասնակցելու (որպես թեկնածու առաջադրվելու) համար ուսանողը, սահմանված կարգի համաձայն, պետք է ներկայացնի համապատասխան հայտ և անհրաժեշտ կից փաստաթղթերը:

3.2. Մրցանակաբաշխության անցկացման օրվանից առնվազն 20 օր առաջ հանձնաժողովը հայտարարում է մրցանակաբաշխության անցկացման պայմանների ու թեկնածուների առաջադրման մասին: Թեկնածուների առաջադրումն իրականացվում է համապատասխան հայտերի միջոցով՝ թղթային կամ էլեկտրոնային (առցանց) ձևաչափով (հայտի ձևը հաստատվում է հանձնաժողովի կողմից): Հայտերի ներկայացման վերջնաժամկետը, որը պետք է լինի մրցանակաբաշխության անցկացման օրվանից առնվազն 10 օր առաջ, սահմանում է հանձնաժողովը:

3.3. Մրցանակաբաշխությանը մասնակից ուսանողների հայտերն ու կից փաստաթղթերը ներկայացվում են ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն: Էլեկտրոնային (առցանց) հայտերի ներկայացման ձևաչափ սահմանելու դեպքում փաստաթղթերը ներկայացվում են համապատասխան առցանց գործիքի միջոցով: Էլեկտրոնային (առցանց) հայտերի ներկայացման մասին որոշումն ընդունվում է հանձնաժողովի կողմից մրցանակաբաշխության անցկացման պայմանների հայտարարության ժամանակ:

3.4. «ԵՊՀ լավագույն ուսանող» մրցանակակիր որոշելու համար դիտարկվում են ուսանողի հետևյալ ձեռքբերումները՝

ա) առաջադիմությունը,

բ) ներգրավվածությունը գիտական աշխատանքներում,

գ) մասնակցությունը ներհամալսարանական արտալսարանային կյանքին,

դ) արտահամալսարանական ակտիվությունը՝ մշակույթի, սպորտի, արվեստի և այլ ոլորտներում հաջողություններ:

3.5. Մրցանակաբաշխության մասնակցի հայտին կից կարող են ներկայացվել նաև

հետևյալ փաստաթղթերը՝

ա) պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների բնութագիր (առավելագույնը երկու բնութագիր),

բ) ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության նախագահի բնութագրերը,

գ) հրատարակված գիտական աշխատանքների պատճենները կամ դրանք հավաստող այլ փաստաթղթեր (եթե այդպիսիք կան),

դ) ներհամալսարանական ակտիվությունը հավաստող փաստաթղթեր (եթե այդպիսիք կան),

ե) արտահամալսարանական ակտիվությունը հավաստող փաստաթղթեր (եթե այդպիսիք կան),

զ) այլ փաստաթղթեր ու նյութեր, որոնք լավագույնս կներկայացնեն մրցանակաբաշխությանը մասնակից ուսանողի՝ սույն կանոնակարգի 3.4 կետում նշված ձեռքբերումները:

Ներկայացված բնութագրերն ու այլ փաստաթղթերը հստակորեն ու հնարավորինս մանրամասնորեն պետք է ներկայացնեն ուսանողի՝ սույն կանոնակարգի 3.4. կետում նշված ձեռքբերումները:

Առաջադիմության վերաբերյալ տեղեկատվությունը հանձնաժողովին կտրամադրվի ԵՊՀ համապատասխան ստորաբաժանումների կողմից:

3.6. Մրցանակաբաշխության հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց հետո՝ երկօրյա ժամկետում, ԵՊՀ կայքում հրապարակվում է հայտ ներկայացրած ուսանողների ցանկը: Եթե որևէ ստորաբաժանումից սահմանված ժամկետում ստացվել է սույն կանոնակարգի 3.1 կետի պահանջներին համապատասխանող երեք կամ ավելի քիչ թվով հայտ, ապա ստորաբաժանման ղեկավարը հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո՝ երեք օրվա ընթացքում, կարող է առաջադրել լրացուցիչ թեկնածուներ:

4. ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

4.1. Մրցանակաբաշխության հաղթողի ընտրությունն իրականացվում է մրցութային կարգով ու երկու փուլով՝ ներկայացված հայտերի գնահատմամբ ու հարցազրույցով, որոնց արդյունքում ձևավորվում է մրցույթին մասնակից ուսանողի ընդհանուր միավորը:

4.2. Առաջին փուլում հանձնաժողովը (հիմնական կազմով) դիտարկում է հայտ ներկայացրած ուսանողների համապատասխանությունը մրցանակաբաշխության ֆորմալ պահանջներին և ըստ սույն կանոնակարգի սահմանված չափանիշների՝ կատարում հայտերի գնահատում:

4.3. Հայտի ու կից ներկայացված փաստաթղթերի բալային գնահատման ժամանակ հանձնաժողովն առաջնորդվում է սույն կարգի 4.4, 4.5, 4.6, 4.7 և 4.8 կետերում նշված չափանիշներով:

4.4. Առաջադիմության համար տրվող միավորներ. թեկնածուների ուսման առաջադիմությունը առավելագույնը գնահատվում է 20 միավորով: Միավորը հաշվարկվում է՝ ըստ հետևյալ բանաձևի՝ 10 + (ՄՈԳ-16) x 2.5:

Մագիստրատուրայի ուսանող-թեկնածուների դեպքում հաշվարկվում է բակալավրիատի ՄՈԳ-ի ու ընթացիկ ՄՈԳ-ի միջին թվաբանականը:

4.5. Ներգրավվածությունը գիտական աշխատանքներում. թեկնածուների՝ գիտական աշխատանքներում ներգրավվածության գնահատականը, ըստ ստորև նշված 4.5.1, 4.5.2, 4.5.3, 4.5.4 և 4.5.5 կետերի, ձևավորվում է թեկնածուին հասանելի միավորների հանրագումարով (հանրագումարային միավորը սահմանափակվում է 20 միավորով): Վերը նշված կետերով սահմանված չափանիշների համաձայն՝ մրցույթի հաղթողը պետք է ապահովի գիտական աշխատանքների ներգրավվածության նվազագույն շեմը (2 միավոր):

4.5.1. Զեկուցմամբ մասնակցություն գիտաժողովներին, սեմինարներին, կոնֆերանսներին, համաժողովներին և գիտական ուղղվածություն ունեցող այլ միջոցառումներին. մեկ զեկուցման համար՝ 1, երկու և ավելի զեկուցումների համար՝ 2 միավոր:

4.5.2. Հրատարակված թեզիսներ. հրատարակված մեկ թեզիսի համար տրվում է 1, երկու ու ավելի թեզիսների համար՝ 2 միավոր:

4.5.3. ԲՈՀ-ի պահանջներին համապատասխան՝ հրատարակված մեկ հոդվածի համար տրվում է 4, երկու ու ավելի հոդվածների համար՝ 7 միավոր: Գիտակրթական ոլորտում այլ ձեռքբերումները (պատենտ, հեղինակային իրավունքի արտոնագիր) հավասարեցվում են ԲՈՀ-ի պահանջներին համապատասխան հրատարակված հոդվածներին:

4.5.4. Արտերկրի հեղինակավոր (որոշվում է հանձնաժողովի կողմից) ամսագրերում հրատարակված մեկ հոդվածի համար տրվում է 7, երկու և ավելի հոդվածների համար՝ 13 միավոր:

4.5.5. Հեղինակավոր մրցանակի կամ միջազգային օլիմպիադայի դիպլոմին արժանանալու դեպքում տրվում է 2 (յուրաքանչյուրի համար), սակայն առավելագույնը՝ 4 միավոր:

4.6 Մասնակցություն ներհամալսարանական կյանքին. թեկնածուների ներհամալսարանական կյանքին մասնակցության գնահատականը, ըստ ստորև նշված 4.6.1, 4.6.2, 4.6.3 և 4.6.4 կետերի, ձևավորվում է թեկնածուին հասանելի միավորների հանրագումարով (հանրագումարային միավորը սահմանափակվում է 15 միավորով):

Մրցույթի հաղթողը պետք է ապահովի ներհամալսարանական հասարակական աշխատանքների ներգրավվածության նվազագույն շեմը (5 միավոր):

4.6.1. Ստորաբաժանման ուսանողական հասարակական (արտալսարանային) տարբեր միջոցառումներում ակտիվ մասնակցության ներգրավվածության համար (մասնակցություն տարբեր միջոցառումներին՝ բացառությամբ այն միջոցառումների, որոնք դիտարկվել են 4.5.1 կետում) թեկնածուին տրվում է 2-4 միավոր:

4.6.2. Ստորաբաժանման ուսանողական հասարակական (արտալսարանային) տարբեր միջոցառումների կազմակերպչական աշխատանքներին մասնակցության համար թեկնածուին տրվում է 3-6 միավոր:

4.6.3. Ստորաբաժանման ՈՒԽ կամ ՈՒԳԸ անդամներին, ՈՒԽ համագումարի պատվիրակներին, ֆակուլտետի խորհրդի անդամներին տրվում է 3 միավոր:

4.6.4. Համահամալսարանական ուսանողական հասարակական աշխատանքներում ակտիվ ներգրավվածության համար տրվում է 5-8 միավոր: ԵՊՀ ուսանողական կազմակերպությունների կենտրոնական մարմիններում ընտրված ուսանողներին տրվում է 2 միավոր:

4.6.5. Մշակույթի, սպորտի, արվեստի և այլ ոլորտներում նշանակալի հաջողությունների համար հանձնաժողովի որոշմամբ կարող է տրվել մինչև 7, իսկ բացառիկ դեպքերում՝ 10 միավոր:

4.7. Առաջին փուլի արդյունքում յուրաքանչյուր ստորաբաժանումից ընտրվում է մրցանակաբաշխության հաղթողի երեք հավակնորդ: Հիմնական հավակնորդների

անունները հրապարակվում են ԵՊՀ կայքում մրցանակաբաշխության անցկացման օրվանից (մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությունից) առնվազն երեք օր առաջ: Հիմնական հավակնորդները հրավիրվում են մասնակցելու մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությանը. մրցանակաբաշխությանհաղթող չճանաչված հիմնական հավակնորդները պարգևատրվում են «Երևանի պետական համալսարանի լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխությանը առաջադրվելու և հիմնական հավակնորդ ճանաչվելու մասին պատվոգրով: ԵՊՀ ռեկտորատն ու ԵՊՀ ուսանողական խորհուրդը կարող են սահմանել նաև մրցույթի հիմնական հավակնորդների խրախուսման այլ միջոցներ:

4.8. Հաղթողի ընտրության փուլում յուրաքանչյուր ստորաբաժանումից մրցանակաբաշխության հաղթողի երեք հավակնորդ հրավիրվում է հարցազրույցի, որը իրականացվում է հանձնաժողովի կողմից (հիմնական կազմն ու տվյալ ստորաբաժանման ղեկավարը): Հայտի հարցերին տրված պատասխանները դիտարկվում են հարցազրույցի ընթացքում: Հարցազրույցի արդյունքում հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր հավակնորդին տրվում է 0-5 միավոր: Հաղթողի անունը հրապարակվում էմրցանակների հանձնման հանդիսավոր արարողության ընթացքում:

4.9. Հաղթողը պարգևատրվում է «Երևանի պետական համալսարանի լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխությանը հաղթելու պատվոգրով և մրցանակաբաշխության համար ռեկտորատի կողմից սահմանված մեդալով: ԵՊՀ ռեկտորատն ու ԵՊՀ ուսանողական խորհուրդը կարող են սահմանել նաև մրցույթի հաղթողների խրախուսման այլ միջոցներ:

4.10. Մրցույթի հաղթող ճանաչված ուսանողը հաջորդ տարի իրավունք չունի մասնակցելու մրցույթին:

5.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Հանձնաժողովի ընդունված որոշումները կարող են բողոքարկվել ԵՊՀ ռեկտորին «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխության արդյունքների հրապարակման օրվանից հետո՝ մեկօրյա ժամկետում: Հանձնաժողովի կողմից որոշումների ընդունման կամ «Լավագույն ուսանող» մրցանակաբաշխության կազմակերպման ու անցկացման գործընթացում ՀՀ օրենսդրության կամ ԵՊՀ ներքին իրավական ակտերի, այդ թվում՝ սույն կանոնակարգի խախտումների հայտ գալու դեպքում ԵՊՀ ռեկտորի պատճառաբանված որոշմամբ կատարվում է մրցանակաբաշխության արդյունքների վերանայում: